

**Սոցիալական պաշտպանության ոլորտի կազմակերպում – 0202
մասնագիտության նկարագիր**

Հ/Հ	Անվանումը	Նկարագիրը
1	2	3
1.	Մասնագիտության անվանումը և դասիչը	Սոցիալական պաշտպանության ոլորտի կազմակերպում, դասիչ՝ 0202
2.	Դերը	Իրականացնում է սոցիալական պաշտպանության տարբեր ենթաօլորտներում (սոցիալական աջակցություն, տարեցներ և հաշմանդամներ, կենսաթոշակային համակարգ, աշխատանք, աշխատավարձ և զբաղվածություն, ընտանիք, կանայք և երեխաներ) մասնագիտական գործընթացների կազմակերպման և իրավական նորմերի պահպանման աշխատանքներ:
3.	Խնդիրների բնագավառը և աշխատանքային գործընթացները	
3.1.	Բնագավառ 1.	Կազմակերպա-իրավական
	Աշխատանքային գործընթացները	<ul style="list-style-type: none"> - համաձայն գործող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սոցիալական պաշտպանությանն տարբեր ենթաօլորտների գործընթացների կազմակերպումը, - շահագրգիռ անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում նորմատիվ-իրավական ակտերի կիրարկման վերաբերյալ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրումը,
3.2.	Բնագավառ 2.	Կազմակերպա-կառավաչական
	Աշխատանքային գործընթացները	<ul style="list-style-type: none"> -սոցիալական պաշտպանության մարմիններում, պետական և ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամներում կազակերպա-կառավարչական գործընթացների ապահովումը, - սոցիալական պաշտպանության ոլորտի նորմատիվ իրավական ակտերի դրույթների մասին շահագրգիռ անձանց իրազեկումը, -սոցիալական պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիների բացահայտում և նրանց իրավունքների պաշտպանության ծառայությունների մատուցման կազմակերպումը, -քաղաքացիներին սոցիալական աջակցության ցուցաբերման ժամանակ (կենսաթոշակների և նպաստների նշանակում, վճարում, կասեցում, վերականգնում, իրավունքների պաշտպանություն, զբաղվածության խնդիրների լուծում և այլն) օրինականության հսկումը, -կենսաթոշակային հիմնադրամներին կուտակային վճարումների, պարտքերի մարման գործընթացները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրումը, - կենսաթոշակային ապահովագրության նպատակով անձնավորված հաշվառման համակարգի վարման աշխատանքների կազմակերպումը, աշխատանքների իրականացման օրինականության հսկումը,

4.	Պատասխանատվությունը և բարդությանաստիճանը	
4.1.	Պատասխանատվությունը	Մասնագետը կրում է պատասխանատվություն կատարված աշխատանքի համար, վերահսկում այլ աշխատողների համար տրամադրում է խորհրդատվություն և տեղեկատվություն, կազմակերպում նրանց աշխատանքը և ապահովում համապատասխան աշխատանքի պայմաններ:
4.2.	Բարդության աստիճանը	Մասնագետը կատարում է միջին բարդության աշխատանք,
5.	Մասնագիտական կարողությունները և հմտություններ	
5.1.	Մասնագիտական գիտելիքները	<p>Մասնագետը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> -սոցիալական պաշտպանության տարբեր ենթաոլորտները կարգավորող իրավական ակտերը, դրանց փոխադարձ կապը և նշանակությունը քաղաքացիների իրավունքների իրացման գործընթացում, -սոցիալական պաշտպանության ոլորտում բնակչության իրավունքների պաշտպանության ձևերը, - սոցիալական պաշտպանության էությունը, տեսակները և ձևերը, -քաղաքացիներին տրամադրվող սոցիալական պաշտպանության սահմանադրական հիմունքները, -սոցիալական աշխատողի քաղաքացիների հետ գործնական շփումների սկզբունքները հաղորդակցման առանձնահատկությունները, -սոցիալական պաշտպանության ոլորտում կիրառվող փաստաթղթերի տեսակները և դրանց ներկայացվող պահանջները, -բնակչության սոցիալական պաշտպանության սկզբունքները, -ապահովագրական գործի և ապահովագրության իրավական և սոցիալական հիմունքները, -ֆինանսավորման, վարկավորման, հաշվապահական հաշվառման սկզբունքները, -սոցիալական պաշտպանության ոլորտի կազմակերպությունների ֆինանսա-տնտեսական գործունեության վերլուծության, վիճակագրության հավաքագրման, ձեռնարկատիրական գործունեության և մենեջմենթի սկզբունքները, -համակարգչային և հեռահաղորդակցման համակարգերի աշխատանքի սկզբունքները
5.2.	Մասնագիտական կարողությունները	<p>Մասնագետը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> -ապահովել մասնագիտական գործունեության օրինականությունը, -ստեղծված իրավիճակներին տալ համապատասխան գնահատականներ, - կազմել իրավական փաստաթղթեր, կատարել փաստաթղթերի համապատասխանության և հավաստիության ստուգում, - մատուցել սոցիալական պաշտպանության ոլորտին առնչվող իրավական բնույթի խորհրդատվություն,

		<p>-հայտնաբերել սոցիալական պաշտպանության ոլորտում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ժամանակ թույլտրված խախտումները, սահմանված կարգով կազմակերպել այդ խախտումների վերացմանն ուղղված միջոցառումներ,</p> <p>-իր պարտականությունների շրջանակներում մատուցել քաղաքացիներին, ընտանիքներին, շահառուների այլ խմբերին խորհրդատվական և ուղղորդման ծառայություններ,</p> <p>-կազմակերպել էթիկայի նորմերին համապատասխան սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայությունների մատուցման գործընթացները,</p>
6.	Լրացուցիչ գիտելիքներ և կարողություններ	
6.1.	Լրացուցիչ գիտելիքներ	<p>Մասնագետը պետք է իմանա.</p> <p>-մայրենի լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցման սկզբունքները</p> <p>-տնտեսագիտության տեսության հիմունքները</p> <p>-տնտեսության մակրո և միկրո ցուցանիշները, դրամավարկային քաղաքականության սկզբունքները,</p> <p>-միջանձնային հաղորդակցման, զրույցների և բանակցությունների վարման սկզբունքները,</p> <p>-պարզագույն համակարգչային ծրագրերը, դրանցով սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերվող խնդիրների լուծման ձևերը,</p> <p>-փաստաթղթաշրջանառության այդ թվում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության սկզբունքները,</p> <p>-կազմակերպության նյութական, կադրային և ֆինանսական ռեսուրսները, մարկեթինգային գործունեության սկզբունքները</p>
6.2.	Լրացուցիչ կարողություններ,	<p>Մասնագետը պետք է կարողանա.</p> <p>-ազատ հաղորդակցվել մայրենի լեզվով, կազմել գրավոր տեքստեր (հաշվետվություններ, զեկույցներ և այլն),</p> <p>-վերլուծել իր խոքը մայրենի լեզվով, վերացնել գրավոր տեքստերում տեղ գտած լեզվական ոչ բարդ անճտությունները,</p> <p>-հաղորդակցվելուրևէ օտար լեզվով հաղորդակցման պարզագույն մակարդակով</p> <p>-օգտվել համակարգչից, օգտագործել համակարգչային ծրագրերը սոցիալական պաշտպանության ոլորտի խնդիրների լուծման համար,</p> <p>-կազմել կազմակերպա-կառավարչական, հայցա-բողոքարկման փաստաթղթեր</p> <p>-մշակել և վերլուծել մուտքի և ելքի փաստաթղթերը, վերահսկել դրանցով նախատեսված գործառույթների իրականացումը,</p> <p>-ապահովել շահառուների անձնական տվյալների վերաբերյալ տվյալների գաղտնիությունը,</p>
7.	Որակավորումը	Սոցիալական պաշտպանության ոլորտի աշխատանքների կազմակերպիչ